ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Նախադպրոցական կրթության մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին» լրամշակված օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-141-25.01.2022-ԳԿ),

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ Աժ պատգամավոր Նարեկ Բաբայան	«Նախադպրոցական կրթության մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծում կատարել լրացում	Ավելացնել դրույթ համաձայն որի օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը կշարադրվի նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝ «նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ՝ հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ, որը բխում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից, սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքների ապահովման հիմքերը.»	Ընդունվել է	Ընդունվել է
			Ավելացնել դրույթ համաձայն որի օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը կշարադրվի նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝ «նախադպրոցական ծառայություններ՝ նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխայի առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, խնամքին և հսկողությանը միտված ծառայություններ, որոնք ապահովվում են սահմանված նորմատիվների առկայության պայմաններում՝ պայմանագրային հիմունքներով.»	ընդունվել է	Ընդունվել է
			Ավելացնել դրույթ համաձայն որի օրենքի 7-րդ հոդված 4-րդ մասում կկատարվի լրացում:	ընդունվել է	Ընդունվել է
			Ավելացնել դրույթ համաձայն որի օրենքի 24-րդ հոդված 1-րդ մասում կկատարվի լրացում:	ընդունվել է	Ընդունվել է